

Եթե Աղետը Հարվածի

Հանգիստ և համբերատար եղեք:

- ❑ Գործածեք ձեր Ծայրահեղ Անհրաժեշտության Համար Նախատեսված Ծրագիրը:
- ❑ Ստուգեք վնասվածքների առկայությունը: Առաջին բժշկական օգնությունը ցուցաբերեք և զանգահարեք 911 հեռախոսահամարով միայն կյանքին վտանգ սպառնող ծայրահեղության դեպքերում:
- ❑ Հետևեք տեղամասային ծայրահեղ անհրաժեշտության ծառայությունների պաշտոնյաների խորհուրդներին:
- ❑ Նորություններ և հրահանգներ ստանալու համար լսեք ձեր ռադիոն կամ հեռուստացույցը:
- ❑ Եվակուացվեք, եթե ստացել եք այդպիսի խորհուրդ: Հագեք պաշտպանողական հագուստ և ամրակազմ կոշիկներ:

Ստուգեք ձեր տունը հնարավոր վնասը բացահայտելու համար:

- ❑ Օգտագործեք գրպանի էլեկտրական լապտեր: Լուցկի կամ մոմ չվառեք:
- ❑ Էլեկտրական անջատիչը չմիացնեք մինչև չպարզեք, որ վնաս չկա:
- ❑ Անջատեք այլ վնասված կենցաղային հարմարությունները:
- ❑ Ստուգեք հրդեհի, հրդեհի վտանգի և տանը սպառնող այլ վտանգի հնարավոր առկայությունը: Հոտ առեք գազի արտահոսքը հայտնաբերելու համար՝ սկսեք ջրի ջեռուցիչից: Եթե գազի հոտ առնեք, արտահոսքի ձայնը լսեք կամ այն տեսնեք, ապա անջատեք գազի հիմնական փականը, բացեք պատուհանները և բոլոր անձանց շտապ դուրս բերեք:
- ❑ Անմիջապես մաքրեք թափված դեղերը, սպիտակեցնող հեղուկները, բենզինը և այլ բոցավառվող հեղուկները:

Հիշեք...

- ❑ Ապահովել Ձեր կենդանիների անվտանգությունը կամ սահմանափակել իրենց տեղաշարժումը:
- ❑ Չանգահարել ձեր ընտանիքի կապին: Հեռախոսը կրկնակի չօգտագործեք, եթե գոյություն չունի կյանքին վտանգ սպառնող ծայրահեղություն:
- ❑ Ստուգեք ձեր հարևանների վիճակը, հատկապես նրանց, ովքեր ապրում են միայնակ, տարեց կամ անաշխատունակ են:
- ❑ Հեռու մնալ ցած ընկած էլեկտրական եներգիայի լարերից:



Լոս Անջելեսի Ամերիկյան Կարմիր Խաչի Կազմակերպությունը և Լոս Անջելես Ծրչանի Առողջապահության Բաժինը ցանկանում են, որպեսզի անհատները և ընտանիքները պատրաստ լինեն հաղթահարելու բոլոր կարգերի վթարները: Մենք հավատում ենք, որ վթարը հաղթահարելու պատրաստվածությունը կարող է կյանք փրկել և քաջալերում ենք ամեն մեկին հնարավորին չափով դիմել այս գործույկում նշված քայլերին իրենց անձնական անվտանգությունը ապահովելու համար:



Վթարը հաղթահարելու պատրաստվածության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար այցելեք www.redcrossLA.org, www.labt.org կամ www.lapublichealth.org ինտերնետ էջերը:

This publication was supported by Grant/Cooperative Agreement Number U90/CCU917012-06 from CDC. Its contents are solely the responsibility of the authors and do not necessarily represent the official views of CDC.


Ծայրահեղ Անհրաժեշտության Համար Նախատեսված Ընտանեկան Ծրագիրը

Վթարը կարող է պատահել ցանկացած ժամանակ և հաճախ առանց որևէ նախազգուշացման: Որոշ կարգի վթարների դեպքում ընտանիքը կարող է տանից ստիպված եվակուացվել, իսկ որոշ այլ կարգի վթարների դեպքում ամբողջ մոտակայքը կարող է ստիպված եվակուացվել, մինչդեռ որոշ վթարների դեպքում ընտանիքը կարող է մի քանի օր ստիպված ապրել տանը: Վթարը միշտ չէ, որ երեկոյան է պատահում, երբ ընտանիքի բոլոր անդամները տանն են: Վթարը կարող է պատահել այն ժամանակ, երբ դուք աշխատանքի եք և երեխաները դպրոցում: Եթե դուք ստիպված լինեք ձեր տանից եվակուացվելու կամ հիմնական ծառայությունները՝ ինչպիսիք են ջուրը, էլեկտրականությունը, գազը կամ հեռախոսակապը, կտրված են, արդյո՞ք դուք կամ ձեր ընտանիքը գիտի թե ինչ պետք է անել:



Նախօրոք պատրաստելով ծայրահեղ անհրաժեշտության ծրագիրը, ընտանիքները լավագույն կերպով կպատրաստվեն վթարը հաղթահարելու համար: Ծրագիրը անհրաժեշտ է յուրաքանչյուր անձին՝ աշխատանքի, դպրոցի և տան համար, որովհետև դա ձեր լավագույն պաշտպանությունն է և կարևոր պարտականությունը գիտենալու, թե ի՞նչ անել վթարի դեպքում:


Ստեղծեք Ծայրահեղ Անհրաժեշտության Համար Նախատեսված Ծրագիր



- ❑ Զննարկեք, թե ի՞նչ կարգի վթարներ են հավանական ձեր տեղամասում: Զննարկեք, թե ինչ պետք է անել յուրաքանչյուր դեպքում:
- ❑ Որոշեք, թե որն է ձեր տանից փախչելու ամենաապահով ճանապարհը: Ամեն սենյակից գտեք ելքի երկու ուղի:
- ❑ Սովորեք ձեր համայնքում կիրառվող նախազգուշացման ազդանշանները, թե ինչպես են հնչում և ինչ պետք է անեք, երբ դրանք լսեք:
- ❑ **Հանդիպման երկու վայր ընտրեք:**
 1. Անսպասելի վթարի դեպքում, ինչպիսին հրդեհն է, անմիջապես ձեր տան դուրսը.
 2. Եթե չեք կարող տուն վերադառնալ, ապա ձեր մոտակայքից դուրս.
- ❑ Յուրաքանչյուր անձ պետք է իմանա ծայրահեղ անհրաժեշտության կապի հասցեները և հեռախոսահամարները:
- ❑ Խնդրեք նահանգից դուրս բնակվող հարազատին կամ ընկերոջը, որպեսզի նա որպես ձեր «ընտանիքի կապը» հանդիսանա:
- ❑ Մեծ աղետի դեպքում սովորաբար ավելի հեշտ է միջքաղաքային հեռախոսահամարով զանգահարել: Ընտանիքի անդամները հարկավոր է, որ զանգահարեն այդ անձին և տեղեկացնեն, թե իրենք որտե՞ղ են գտնվում:
- ❑ Աղետի ընթացքում և դրանից հետո հարցրեք կենդանիների խնամքի վայրերի մասին: Կենդանիներին արգելված է վթարային ապաստարաններ կամ որոշ հյուրանոցներ մուտք գործելը: Լրացուցիչ տեղեկության համար կապ հաստատեք ձեր տեղամասային մարդկային կազմակերպության հետ: Ծրագրեք, թե ինչպես խնամք ձեր կենդանուն:
- ❑ Զննարկեք ընտանիքի անդամների բոլոր հատուկ կարիքները: Օրինակ՝ տարեց և անաշխատունակ անձից հնարավոր է, որ եվակուացման ժամանակ լրացուցիչ օգնության կարիք ունենան կամ ունենան հատուկ պահանջներ ապաստարանում գտնվելիս:
- ❑ Տեղեկություն ձեռք բերեք ձեր աշխատատեղի, ձեր երեխաների դպրոցի կամ մանկապարտեզի ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նախատեսված ծրագրի վերաբերյալ, կամ ուրիշ այն վայրերի ծրագրերի վերաբերյալ, որտեղ դուք և ձեր ընտանիքը ժամանցում եք: Հավաստիացեք, որ ձեր ընտանիքի բոլոր անդամները տեղյակ են տարբեր ծրագրերի գոյության մասին:



Armenian



Ի՞նչ է հարկավոր անել, երբ աղետը հանկարծակի հարվածի



Ծայրահեղ Անհրաժեշտության Համար Նախատեսված Ընտանեկան Ծրագիրը



Լրացրեք այս ստուգման թերթիկը

- Յուրաքանչյուր հեռախոսի կողքին փակցրեք ծայրահեղ անհրաժեշտության ծառայությունների հեռախոսահամարները (հրշեջ, ոստիկանական, շտապ օգնության ծառայությունների, ընտանիքի կապի և այլն):
- Սովորեցրեք ձեր երեխաներին, թե ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգնություն խնդրելու համար ինչպես և երբ զանգահարեն 911 հեռախոսահամարով:
- Ընտանիքի բոլոր պատասխանատու անձանց ցուցադրեք, թե ինչպես և երբ պետք է ջուրը, գազը և էլեկտրականությունը հիմնական փոխարկիչից անջատել: Բոլոր անհրաժեշտ գործիքները պահպանեք գազի և ջրի անջատման փականի կողքին: Գազը միայն անջատեք այն դեպքում, երբ գազի արտահոսքը տեսնեք, հոտը առնեք կամ արտահոսքի ձայնը լսեք: Եթե դուք գազը անջատեք, ապա այն պետք է նորից միացնի միայն մասնագետը:
- Ընտանիքի ամեն անդամին սովորեցրեք, թե ինչպես պետք է հրամարիչը օգտագործել և ցույց տվեք, թե որտեղ է այն պահպանված:
- Ձեր տան ամեն հարկում, հատկապես ննջասենյակների մոտ տեղավորեք ծխատազնապաշտպան:
- Գործողություններ անցկացրեք տանը սպառնող վտանգները հայտնաբերելու համար:
- Հավաքեք Ծայրահեղ Անհրաժեշտության Պաշարների Տոպրակը:
- Այցելեք Ամերիկյան Կարմիր Խաչի Կազմակերպության Առաջին Օգնության և CPR դասընթացը:

Փորձարկեք և Պահպանեք Ձեր Ծրագիրը

Տարին առնվազն երկու անգամ փորձարկեք ձեր հրդեհի և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի համար նախատեսված էվակուացիայի ծրագրերը:

Ձեր Ծայրահեղ Անհրաժեշտության Պաշարի Տոպրակի ստունդը և ջուրը վեց ամիսը մեկ փոխեք:

Ձեր ծխատազնապաշտպան փորձարկեք ամեն ամիս և առնվազն տարին մեկ անգամ փոխեք մարտկոցները:



- Ստուգեք էլեկտրականության միացման ելքերը և դրանք մի ծանրաբեռեք:
- Տեղադրեք ծխատազնապաշտպան: Ծխատազնապաշտպանը մաքրեք և փորձարկեք ամիսը մեկ անգամ: Առնվազն տարին մեկ անգամ փոխեք մարտկոցները:
- Յուրաքանչյուր ննջասենյակում պահեք մեկ սուլիչ՝ հրդեհի դեպքում տան անդամներին արթնացնելու համար:
- Գնեք A-B-C կարգի հրամարիչ:
- Ձեր տան յուրաքանչյուր բարձրահարկում պահեք ծալովի սանդուղք:
- Մտածեք տնային ցնցուղներ տեղադրելու մասին:

Լրացրեք, հանեք պատճենները և բաժանեք ընտանիքի բոլոր անդամներին

Ծայրահեղ Անհրաժեշտության Դեպքում Նախատեսված Հանդիպման Վայրը (ձեր տանից դուրս).

Հանդիպման Վայրը (ձեր մոտակայքից դուրս).

Հեռախոս. _____

Հասցե. _____

Ընտանիքի Կապը.

Հեռախոս. (Ցերեկային) _____

Հեռախոս (Երեկոյան) _____

Հրդեհի Անվտանգության Ծրագիր

- Յուրաքանչյուր սենյակից ելքի երկու ուղիներ ծրագրեք:
- Ընտանիքի անդամներին սովորեցրեք, որ հրդեհից փախչելու ընթացքում իրենց պահեն հատակին մոտիկ:
- Ընտանիքի անդամներին սովորեցրեք, որ երբեք չբացեն այն դռները, որոնք հրդեհի հետևանքով տաքացել են: Հրդեհի դեպքում, ձեռքի ետևի մասով ստուգեք դռան ներքևի մասը: Եթե այն տաք է, ապա դուռը մի բացեք: Օգտագործեք սենյակի ձեր այլ ելքի ուղին:

Հրդեհի կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ձեզ հարկավոր կլինի ձեր տանից, բնակարանից կամ շարժական տանից էվակուացվել այդ մասին տեղեկացումը ստանալուց անմիջապես հետո: Դուք պետք է պատրաստ լինեք արագ դուրս գալու:

Ձեր բնակավայրի հատակագիծը նկարելով, փրկվելու ծրագիր զարգացրեք: Նշեք ծայրահեղ անհրաժեշտության պաշարների (Ծայրահեղ Անհրաժեշտության Պաշարների Տոպրակի), հրամարիչների, ծխատազնապաշտպանների, ծալվող սանդուղքների, առաջին բժշկական օգնության տոպրակի պահպանման տեղերը և կենցաղային հարմարանքների անջատման կետերը:

Հաջորդ քայլը՝ կտրտված գիծ նկարեք գունավոր գրիչով, քարտեզագծելով առնվազն երկու ելքի ուղիներ յուրաքանչյուր սենյակից: Տանից դուրս մի վայր նշեք, որտեղ տան անդամները կհանդիպեն:

Տարին առնվազն երկու անգամ փորձարկեք ծայրահեղության դեպքում էվակուացման վարժություններ:



Ընտանիքի Կարևոր Փաստաթղթերը

Այս արձանագրությունները պահպանեք անջրանցիկ, փոխադրելի անոթի մեջ

- Կտակները, ապահովագրության վկայականները, պայմանագրերը, վավերագրերը, արժեթղթերը և պարտատոմսերը
- Անձնագրերը, սոցիալական ապահովագրության քարտերը, պատվաստումների գրանցումները
- Բանկային հաշվեհամարները
- Վարկաքարտերի հաշվեհամարները և ֆինանսական հաստատությունների տեղեկությունը
- Տան թանկարժեք իրերի գույքացուցակը, կարևոր հեռախոսահամարները
- Ընտանեկան տվյալների գրառումները (ծննդյան, ամուսնության, մահվան վկայականները)



Վտանգի Բացահայտման Գործողությունները

Աղետի պահին տան առարկաները կարող են վնասվածք և վնաս պատճառել: Այն իրերը, որոնք շարժուն են, ընկնող, կոտրվող կամ կարող են հրդեհի պատճառ դառնալ հնարավոր վտանգ են ներկայացնում:

- Վերանորոգեք էլեկտրականության թերի լարերը և գազի վնասված խողովակները:
- Դարակները ամուր ամրացրեք:
- Մեծ, ծանր առարկաները տեղադրեք ներքևի դարակներում:
- Ամրացրեք գլխավերևի լուսավորման հարմարանքները:
- Ամրացրեք ջրի ջեռուցիչը: Փոկերով ամրացրեք պատի ճարմանդներին:
- Վերանորոգեք տան առաստաղի կամ հիմքի ճեղքերը:
- Ձեր մության աղբյուրներից հեռու պահեք մոլախոտը վերացնելու նյութերը, պեստիցիդները և բոցավառվող ապրանքները:
- Յուրուտ փայլեցման լաթերը կամ թափոնները տեղադրեք մետաղյա ծածկված ամանների մեջ:
- Մաքրեք և վերանորոգեք ծխնելույզները, ծխանցքի խողովակները, օդանցքի միացման խողովակները և գազի օդանցքները:



Մահճակալների վերևում նկարներ և հայելիներ մի կախեք: